**<<ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N <<ԳՀԱՊՁԲ-2020/16-8-ԵՊԲՀ-2>>**

ք. Երևան <<_____>>_____________ 20___թ.

**<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամը**, ի դեմս ռեկտոր **Ա. Ա. Մուրադյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և <<**Մեդտեխսերվիս**>> **ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Ա. Մանուկյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10 (տասը)** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10 (տասը)** օրից ավելի:

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **1,368,226 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսունութ հազար երկու հարյուր քսանվեց) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն (ընդ որում՝ ԱԱՀ-ն հաշվարկված է թիվ 61, 64, 65, 71, 72, 75, 84 չափաբաժինների համար)**: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

**Սույն պայմանագրի մասով Վաճառողը ապրանքների մատակարարումն իրականացնում է միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի:**

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

**4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

**5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի <<Էլեկտրոնային գնումներ>> բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում, Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի <<Օրենսդրություն>> բաժնի <<Ֆինանսների նախարարի հրամաններ>> ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **տասն** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն

հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

**Եթե պայմանագրի գործողության ընթացքում Գնորդի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:**

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի <<Պայմանագրերը միակողմանի

լուծելու մասին ծանուցումներ>> բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է **18 (տասնութ)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| **<<ԳՆՈՐԴ>>** | **<<ՎԱՃԱՌՈՂ>>** |
| **<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ** | **<<Մեդտեխսերվիս>> ՍՊԸ** |
| **Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2** | **ք. Երևան, Լեո-12** |
| **Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ** | **<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ** |
| **Հ/Հ 11500166513800** | **Հ/Հ 163008142792** |
| **ՀՎՀՀ 01503448** | **ՀՎՀՀ 02205001** |
| | **էլ. հասցեն medtechservice@mail.ru** |
| | **Հեռ. 010-53-36-30, 010-53-36-50** |
| **Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան** | **Տնօրեն՝ Ա. Մանուկյան** |
| ______________________________ | ______________________________ |
| **(ստորագրությունը)** | **(ստորագրությունը)** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.03.25 15:28:57 AMT

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2020.03.25 12:24:18 GMT+04:00

**Հավելված N 1**
**<<____>> <<_______________>> 20___թ. կնքված**
**N <<ԳՀԱՊՁԲ-2020/16-8-ԵՊԲՀ-2>> ծածկագրով պայմանագրի**

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**ՀՀ դրամ**

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախա-տեսված չափա-բաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 16 | 33411390 | Գչիր ալմաստե՝ տուրբինային, գլանաձև | Գչիր ալմաստե՝ տուրբինային, գլանաձև, MANI JAPAN | Գչիր ալմաստե՝ տուրբինային, գլանաձև N1 N2 N3- բոռ ալմաստե գլխիկով տուրբինային ծայրակալի համար: Կազմված է առանցքից և ալմաստե գլխիկից: Չափսերը ըստ պատվիրատուի պահանջի: Ֆորմատ՝ 1 հատ գչիր: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 180 | 18,000 | 100 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 100 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 17 | 33411390 | Գչիր ալմաստե՝ տուրբինային, սկավառակաձև | Գչիր ալմաստե՝ տուրբինային, սկավառակաձև, MANI JAPAN | Գչիր ալմաստե՝ տուրբինային, սկավառակաձև N1 N2 N3 - բոռ ալմաստե գլխիկով տուրբինային ծայրակալի համար: Կազմված է առանցքից և ալմաստե գլխիկից: Չափսերը ըստ պատվիրատուի պահանջի: Ֆորմատ՝ 1 հատ գչիր: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 180 | 14,400 | 80 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 80 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 18 | 33411390 | Գչիր ալմաստե՝ տուրբինային, գնդաձև | Գչիր ալմաստե՝ տուրբինային, գնդաձև, MANI JAPAN | Գչիր ալմաստե՝ տուրբինային, գնդաձև N1 N2 N3 - բոռ ալմաստե գլխիկով տուրբինային ծայրակալի համար: Կազմված է առանցքից և ալմաստե գլխիկից: Չափսերը ըստ պատվիրատուի պահանջի: Ֆորմատ՝ 1 հատ գչիր: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 180 | 18,000 | 100 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 100 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 19 | 33411390 | Գչիր ալմաստե՝ տուրբինային, կաթիլաձև | Գչիր ալմաստե՝ տուրբինային, կաթիլաձև, MANI JAPAN | Գչիր ալմաստե՝ տուրբինային, կաթիլաձև N1 N2 N3 - բոռ ալմաստե գլխիկով տուրբինային ծայրակալի համար: Կազմված է առանցքից և ալմաստե գլխիկից: Չափսերը ըստ պատվիրատուի պահանջի: Ֆորմատ՝ 1 հատ գչիր: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 180 | 18,000 | 100 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 100 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | օրվա ընթացքում |
| 20 | 33411390 | Գչիր ալմաստե՝ տուրբինային, հակառակ կոն | Գչիր ալմաստե՝ տուրբինային, հակառակ կոն, MANI JAPAN | Գչիր ալմաստե՝ տուրբինային, հակառակ կոն N1 N2 N3- Բոռ ալմաստե գլխիկով տուրբինային ծայրակալի համար: Կազմված է առանցքից և ալմաստե գլխիկից: Չափսերը ըստ պատվիրատուի պահանջի: Ֆորմատ՝ 1 հատ գչիր: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 180 | 18,000 | 100 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 100 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 21 | 33411390 | Գչիր ալմաստե՝ տուրբինային, հրաձև | Գչիր ալմաստե՝ տուրբինային, հրաձև, MANI JAPAN | Գչիր ալմաստե՝ տուրբինային, հրաձև N1 N2 N3 - բոռ ալմաստե գլխիկով տուրբինային ծայրակալի համար: Կազմված է առանցքից և ալմաստե գլխիկից: Չափսերը ըստ պատվիրատուի պահանջի: Ֆորմատ՝ 1 հատ գչիր: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 180 | 18,000 | 100 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 100 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 24 | 33141193 | Գնդաձև տեխնիկական բոռ | Գնդաձև տեխնիկական բոռ, ООО «ТД ВЛАДМИВА» РФ | Գնդաձև տեխնիկական բոռեր: Ֆորմատ՝ 1 հատ բոռ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 320 | 6,400 | 20 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 20 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 25 | 33141193 | Հղկաբոլորակ էլաստիկ | Հղկաբոլորակ էլաստիկ, ЛАТУС ЧП УКРАИНА | Հղկաբոլորակ էլաստիկ PP 50: էլաստիկ սկավառակ տեխնիկական: Սկավառակի տրամագիծը 50մմ: Նախատեսված է մետաղական համաձուլվածքի փայլեցման համար: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 350 | 7,000 | 20 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 20 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 26 | 33141193 | Դիսկ մոդել կտրելու համար | Դիսկ մոդել կտրելու համար, HANGZHOU LIANDONG IMPORT & EXPORTCO.LTD China | Դիսկ մոդել կտրելու համար, հաստությունը 0.27մմ, տրամագիծը 37մմ, նախատեսված է բոր մեքենայի համար: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 230 | 3,450 | 15 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 15 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 29 | 33141193 | Նրբաաղոցի ատամիկներ (կարճ) | Նրբաաղոցի ատամիկներ (կարճ), MELBUR INDUSTRIES CO., LIMITED (Dochem) China | Նրբաաղոցի ատամիկներ (կարճ): Մանր սղոցիկի ատամիկներով մետաղյա ձողեր: Երկարությունը՝ 13 սմ: Ֆորմատ՝ 1 հատ նրբաաղոցի ատամիկ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին | հատ | 250 | 2,500 | 10 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 10 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | | | | | | ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 31 | 33141193 | Փայլեցման ռետին տեխնիկական, կլոր | Փայլեցման ռետին տեխնիկական, կլոր, ООО «ТД ВЛАДМИВА» РФ | Փայլեցման ռետին տեխնիկական, կլոր: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 280 | 5,600 | 20 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 20 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 32 | 33141193 | Վոյլոկ (թաղիք ֆիլց) | Վոյլոկ (թաղիք ֆիլց), HANGZHOU LIANDONG IMPORT & EXPORTCO.,LTD China | Կոնուսաձև, խտացված վոյլոկից, մետաղյա և պլաստմասե կոնստրուկցիաների փայլեցման համար: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 700 | 14,000 | 20 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 20 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 33 | 33131140 | Տեխնիկական խոզանակ մազերով կոշտ | Տեխնիկական խոզանակ մազերով կոշտ, ООО «ТД ВЛАДМИВА» РФ | Տեխնիկական խոզանակ մազերով՝ կոշտ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 800 | 24,000 | 30 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 30 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 36 | 33131140 | Փայլեցման խոզանակ | Փայլեցման խոզանակ, HANGZHOU LIANDONG IMPORT & EXPORTCO.,LTD China | Փայլեցման խոզանակ, արտադրվում է սինթետիկ մազից, նախատեսված է պլոմբի հարթեցման և հղկման համար: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 100 | 15,000 | 150 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 150 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 45 | 33411560 | Պուլպէքստրակտոր | Պուլպէքստրակտոր, ООО «КМИЗ» экспорт РФ | Պատրաստված է չժանգոտվող մետաղից, նախատեսված պուլպայի հեռացման համար, միանվագ օգտագործման: Ֆորմատ՝ 1հատ պուլպէքստրակտոր/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 35 | 70,000 | 2,000 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 2,000 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 47 | 33141193 | Ֆրեզ-ԿՀՁ, բարակ | Ֆրեզ-ԿՀՁ, բարակ, ООО «КМИЗ» | Ֆրեզ-ԿՀՁ, բարակ-կոնաձև, սրածայր, ուղիղ, սև գունավորմամբ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, | հատ | 1,800 | 54,000 | 30 | ք. Երևան Աբովյան 60 | 30 | 2020 թվականին՝ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | экспорт РФ | չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | | | | | և/կամ Մուրացան 114 | | միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 48 | 33141193 | Ֆրեզ-ԿՀԶ, հատ | Ֆրեզ-ԿՀԶ, հատ, ООО «КМИЗ» экспорт РФ | Ֆրեզ-ԿՀԶ, հատ-կոնաձև, ուղիղ, մանր ատամիկներով, մետաղը հղկելու համար: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 1,800 | 54,000 | 30 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 30 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 53 | 33141193 | Տեխնիկական պին | Տեխնիկական պին, HANGZHOU LIANDONG IMPORT & EXPORTCO.,LTD China | Տեխնիկական պին մետաղյա մեկոտանի: Ֆորմատ՝ 1 հատ պին: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 12 | 1,200 | 100 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 100 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 61 | 44921100 | Սպիտակ գիպս | Սպիտակ գիպս, AMED IRAN | Սպիտակ գիպս, որը սպիտակ փոշի է: Կիրառվում է ստոմատոլոգիայում տեխնիկական աշխատանքների կատարման համար: Ֆորմատ՝ 1 կգ սպիտակ գիպս: Փաթեթավորումը՝ պարկում 50կգ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | կգ | 162 | 64,800 | 400 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 400 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 64 | 33141212 | Ջերմակարծրացող պլաստմաս | Ջերմակարծրացող պլաստմաս, LATACRYL-H, ЛАТУС ЧП УКРАИНА | Ջերմակարծրացող պլաստմասսա, որը պարունակում է փոշի 1000գր և հեղուկ՝ 500մլ: Օգտագործվում է շարժական պրոթեզի պատրաստման համար: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 22,500 | 337,500 | 15 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 15 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 65 | 33141212 | Սիլիկոնի երկրորդ շերտ +կատալիզատոր | Սիլիկոնի երկրորդ շերտ +կատալիզատոր, ORMAMAX+ORMACTIVATOR, MAJOR PRODOTTI DENTARY SPA ITALY | Սիլիկոնի II շերտ՝ 160մլ և կատալիզատոր՝ 60մլ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 7,300 | 182,500 | 25 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 25 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | ընթացքում |
| 68 | 33141212 | Դեվիտալիզացնող մածուկ մկնդեղով | Դեվիտալիզացնող մածուկ մկնդեղով, ДЕВИТ-АРС, ООО «ТД ВЛАДМИВА» РФ | Դեվիտալիզացնող մածուկ մկնդեղով: Բաղադրությունը՝ մկնդեղային անհիդրիդ (30%), լիդոկայինի հիդրոքլորիդ, էվգենոլ: Տուփի պարունակությունը՝ 3գր մածուկ մկնդեղով: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 4,950 | 9,900 | 2 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 2 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 69 | 33141212 | Դեվիտալիզացնող մածուկ առանց մկնդեղի | Դեվիտալիզացնող մածուկ առանց մկնդեղի, ДЕВИТ-С, ООО «ТД ВЛАДМИВА» РФ | Դեվիտալիզացնող մածուկ, առանց մկնդեղի՝ 3գ տարրողությամբ: Պարունակում է պարաֆորմալդեհիդ, լիդոկայինի հիդրոքլորիդ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 1,200 | 16,800 | 14 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 14 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 71 | 24951420 | Մոդելավորման մոմ | Մոդելավորման մոմ, ЛАТЕВАКС ЛАТУС ЧП УКРАИНА | Մոդելավորման մոմ տեխնիկական աշխատանքներ կատարելու համար: Փաթեթավորումը՝ 55գր տուփում: Ֆորմատ՝ կիլոգրամ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | կգ | 16,100 | 10,626 | 0.66 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 0.66 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 72 | 33141212 | Սուպեր գիպս | Սուպեր գիպս, Singletypo4, LASKOD S.p.A. ITALY | Սուպերգիպս IV-րդ կարգի, գերկարծր: Տուփի պարունակությունը՝ 6կգ, դեղնաշագանակագույն փոշի: Ֆորմատ՝ հատ: Կիրառվում է օրթոպեդիկ ստոմատոլոգիայում: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 8,800 | 61,600 | 7 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 7 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 73 | 33141212 | Էմալը քայքայող գել | Էմալը քայքայող գել, ГЕЛЬ ТРАВИЛЬНЫЙ 37%, ЛАТУС ЧП УКРАИНА | Դոնդող է ատամների կարծր հյուսվածքների թթվուտամշակման համար: Չի ծորում լնդի վրա և հեշտությամբ լվացվում է ջրի շիթով: Կիրառվում է կարիոզ խոռոչների լիցքավորումից առաջ: Ակտիվ բաղադրիչը՝ օրթոֆոսֆորական թթու 37%, 5մլ տարրողությամբ: Արտադրման ձևը՝ ներարկիչ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 700 | 5,600 | 8 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 8 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 74 | 33141212 | Ադհեզիվ բոնդ | Ադհեզիվ բոնդ, CharmBond, DENTKIST, INC. KOREA | Ադհեզիվ բոնդ, ատամնալիցքի համար, 5մլ տարրողությամբ անգույն թափանցիկ մածուցիկ հեղուկ սրվակում: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին | հատ | 5,000 | 70,000 | 14 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան | 14 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | | | | | 114 | ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 75 | 33141212 | Յուղ ծայրակալների յուղման համար | Յուղ ծայրակալների յուղման համար, APPLEDENTAL CHINA | Յուղ ծայրակալի յուղման համար, ալյումինե տարրայով: Պարունակությունը՝ 500մլ յուղ: Նախատեսված է ծայրակալները յուղելու համար: Նոր է, չօգտագործված: Ֆորմատ՝ հատ: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 3,800 | 38,000 | 10 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 10 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 76 | 33141212 | Փայլեցնող մածուկ | Փայլեցնող մածուկ, ALPHA-PRO, Dental Technologies, Inc. USA | Փայլեցնող մածուկ՝ ատամների պրոֆիլակտիկ մաքրման համար: Աբրազիվ մածուկ է, տարբեր համերի: Տարայի պարունակությունը՝ 2գ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 68 | 13,600 | 200 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 200 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 77 | 33141212 | Էվգենոլ | Էվգենոլ, ООО «ТД ВЛАДМИВА» РФ | Էվգենոլը արտաքինից անգույն հեղուկ է, որը օդի հետ շփվելիս վերածվում է դեղինի: Հիմնական բաղադրիչը մեխակի յուղն է, պարունակում է 85% մեխակի յուղ: Սրվակի պարունակությունը՝ 100 մլ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 9,950 | 49,750 | 5 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 5 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 78 | 33141194 | Հեղուկ լցանյութ լուսակարծրացող | Հեղուկ լցանյութ լուսակարծրացող, LATELUX flow, ЛАТУС ЧП УКРАИНА | Լուսային կարծրացման հեղուկ լցանյութ՝ բարձրորակ՝ 2.2 գր: 15 գույներից ընտրելու հնարավորություն (գույներն են՝ A1, A2, A3, A3.5, B1, B2, C3, OA2, OA3, OB2, OA3.5, U, DY, G, W): Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 2,200 | 35,200 | 16 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 16 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 79 | 33141212 | Հեղուկ գիպսը անջատելու համար | Հեղուկ գիպսը անջատելու համար, ALGOPLEN | Ատամնաբուժական ալգինատային հիմքով տարանջատիչ լուծույթ՝ 250մլ տարայով: Ֆորմատ՝ հատ: Նախատեսված է գիպսը գիպսից, գիպսը պլաստմասսայից զատելու համար: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 1,850 | 59,200 | 32 | ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 | 32 | 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |
| 84 | 33141212 | Սիլիկոնի չափսանյութի | Սիլիկոնի չափսանյութի | Սիլիկոն ,,C" I շերտ բազային՝ 900գ, II-րդ շերտ՝ 160մլ, կատալիզատոր՝ 60մլ: Նոր է, | հատ | 12,900 | 51,600 | 4 | ք. Երևան Աբովյան 60 | 4 | 2020 թվականին՝ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հավաքածու | հավաքածու, ORMAKIT, MAJOR PRODOTTI DENTARY SPA ITALY | չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | | | | | և/կամ Մուրացան 114 | | միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում |

*** 1) Ապրանքները նոր են, չօգտագործված:**

**2) Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:**

**<<ԳՆՈՐԴ>>**
**<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ**
**Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2**
**Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ**
**Հ/Հ 11500166513800**
**ՀՎՀՀ 01503448**

**Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան**

**______________________________**
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.03.25 15:27:53 AMT

**<<ՎԱՃԱՌՈՂ>>**
**<<Մեդտեխսերվիս>> ՍՊԸ**
**ք. Երևան, Լեռ-12**
**<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ**
**Հ/Հ 163008142792**
**ՀՎՀՀ 02205001**
**էլ. հասցեն medtechservice@mail.ru**
**Հեռ. 010-53-36-30, 010-53-36-50**

**Տնօրեն՝ Ա. Մանուկյան**

**______________________________**
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2020.03.25 12:25:57 GMT+04:00

**Հավելված N 2**
**<<____>> <<________________>> 20___թ. կնքված**
**N <<ԳՀԱՊՁԲ-2020/16-8-ԵՊԲՀ-2>> ծածկագրով պայմանագրի**

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**ՀՀ դրամ**

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 16 | 33411390 | Գչիր ալմաստե՝ տուրբինային, գլանաձև | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 17 | 33411390 | Գչիր ալմաստե՝ տուրբինային, սկավառակաձև | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 18 | 33411390 | Գչիր ալմաստե՝ տուրբինային, գնդաձև | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 19 | 33411390 | Գչիր ալմաստե՝ տուրբինային, կաթիլաձև | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 20 | 33411390 | Գչիր ալմաստե՝ տուրբինային, հակառակ կոն | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 21 | 33411390 | Գչիր ալմաստե՝ տուրբինային, հրաձև | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 24 | 33141193 | Գնդաձև տեխնիկական բոռ | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 25 | 33141193 | Հղկաբոլորակ էլաստիկ | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 26 | 33141193 | Դիսկ մոդել կտրելու համար | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 29 | 33141193 | Նրբասղոցի ատամիկներ (կարճ) | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 31 | 33141193 | Փայլեցման ռետին տեխնիկական, կլոր | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 32 | 33141193 | Վռելոկ (թավշե ֆիլց) | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 33 | 33131140 | Տեխնիկական խոզանակ մազերով կոշտ | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 36 | 33131140 | Փայլեցման խոզանակ | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 45 | 33411560 | Պուլպէքստրակտոր | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 47 | 33141193 | Ֆրեզ-ԿՀՁ, բարակ | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 48 | 33141193 | Ֆրեզ-ԿՀՁ, հաստ | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 53 | 33141193 | Տեխնիկական պին | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 61 | 44921100 | Սպիտակ գիպս | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 64 | 33141212 | Ջերմակարծրացող պլաստմաս | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 65 | 33141212 | Սիլիկոնի երկրորդ շերտ +կատալիզատոր | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 68 | 33141212 | Դեվիտալիզացնող մածուկ մկնդեղով | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 69 | 33141212 | Դեվիտալիզացնող մածուկ առանց մկնդեղի | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 71 | 24951420 | Մոդելավորման մոմ | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 72 | 33141212 | Սուպեր գիպս | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 73 | 33141212 | Էմալը քայքայող գել | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 74 | 33141212 | Ադհեզիվ բոնդ | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 75 | 33141212 | Յուղ ծայրակալների յուղման համար | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 76 | 33141212 | Փայլեցնող մածուկ | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 77 | 33141212 | Էվգենոլ | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 78 | 33141194 | Հեղուկ լցանյութ լուսակարծրացող | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 79 | 33141212 | Հեղուկ գիպսը անջատելու համար | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 84 | 33141212 | Սիլիկոնի չափանյութի հավաքածու | 0 | 0 | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |

***Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ ըստ փաստացի մատակարարված խմբաքանակների:**


**<<ԳՆՈՐԴ>>**
**<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ**
**Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2**
**Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ**
**Հ/Հ 11500166513800**
**ՀՎՀՀ 01503448**

**Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան**

________________________________
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.03.25 15:27:06 AMT

**<<ՎԱՃԱՌՈՂ>>**
**<<Մեդտեխսերվիս>> ՍՊԸ**
**ք. Երևան, Լեո-12**
**<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ**
**Հ/Հ 163008142792**
**ՀՎՀՀ 02205001**
**էլ. հասցեն medtechservice@mail.ru**
**Հեռ. 010-53-36-30, 010-53-36-50**

**Տնօրեն՝ Ա. Մանուկյան**

________________________________
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2020.03.25 12:26:42 GMT+04:00

*Հավելված N 3*
*«    »    20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
____________________________
____________________________
գտնվելու վայրը _____________
հh _________________________
հվհh _______________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը _________________
հh_____________________________
հվհh____________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «        » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
____________________________________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «   » «        » 20   թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«      »            20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____________________
Գնորդի անվանումը    Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20    թ. _____________________ -ին կնքված N _________________
պայմանագրի կնքման ամսաթիվը    պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| ______________________________ | ______________________________ |
| Ստորագրություն | ստորագրություն |